Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

տեկնոր, մ.գ.դ. _____ Ա.Մ. Ծատուրյան

«28» 04 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳՈՀԱՐ ԲԵՐԿԱՅԻ ԵՐԻՑՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ» խորագրով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Գոհար Բերկայի Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում (Արձ. թիվ 19, կայացած՝ 28.04.2026թ.):

Մասնակցում էին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Ք. Վիրաբյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Դանիելյանը, Լ. Մարուքյանը, Ա. Ստեփանյանը, Զ. Գրիգորյանը, մ.գ.թ. Ն. Հովհաննիսյանը, հ.գ.թ., դոցենտներ Հ. Ավագիմյանը, Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, դասախոսներ Ն. Ստեփանյանը, Ա. Խաչատրյանը:

Հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ 2023 թվականից փոխվել է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման

կարգը և հանրակրթության խնդիրն է մշտապես մոտիվացնել սովորողին և բարելավել ուսումնական առաջադիմությունը:

Հեղինակը գտնում է, որ այս համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգը, բացահայտել կրտսեր դպրոցականի կրթական կարիքները, վերլուծել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու մանկավարժահոգեբանական պատճառները և առաջադրել կրտսեր դպրոցականի ուսումնական առաջադիմության դրական առաջընթացի ապահովման մանկավարժական աջակցության ուղիներ:

Նա մանրամասն ներկայացրել է հետազոտության իրականացման երեք փուլերը և կատարված աշխատանքները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 12 աղյուսակից, 10 գծապատկերից, 55 տրամագրից, 112 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 168 համակարգչային էջ, հավելվածով՝ 290 էջ:

Ատենախոսության առաջին՝ «Կրտսեր դպրոցականի ուսումնառության ցածր արդյունքների բարելավումը որպես մանկավարժական հիմնախնդիր» խորագրով գլխում, որն ունի հինգ ենթագլուխ, ներկայացվել են կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները, նրա զարգացման վրա ազդող հիմնական գործոնները, ինչպես նաև անձի զարգացման տարիքային շրջաբաժանումները: Ատենախոսը մեկնաբանել է «ուսումնական դժվարություն» հասկացությունը և բացահայտել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները: Նա կարևորել է կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացին պատրաստվածության և միջանձնային հարաբերությունների (աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ,...) փոխկապակցվածությունը, բացահայտել և ներկայացրել է ներընտանեկան հարաբերությունների ազդեցությունը կրտսեր դպրոցականների արժեքների ձևավորման, ուսումնական մոտիվացիայի և առաջադիմության վրա: Հեղինակը ներկայացրել է տարբեր ժամանակաշրջաններում ուսումնառության արդյունքների գնահատման ձևերը, մանկավարժ-գիտնականների մոտեցումները, ինչպես նաև

հանրակրթության պետական նոր չափորոշչի փոփոխությամբ պայմանավորված ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգը:

Ատենախոսության երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով գլուխը բաղկացած է վեց ենթագլխից, որտեղ հեղինակի կողմից ներկայացվել է դպրոց-ընտանիք համագործակցությունը որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի: Կարևորվել է դպրոց-ընտանիք համագործակցության ազդեցությունը՝ կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի արդյունավետության վրա: Որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիներ ներկայացվել են կրթական ռեսուրսների ներդրումը, տարբերակված ուսուցումը, երկարօրյա ուսուցումը և մշտադիտարկումը:

Երրորդ՝ «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների բացահայտմանն ու աջակցությանն ուղղված հետազոտական աշխատանք» խորագրով գլխում ներկայացվել են իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքն ու արդյունքները, որոնք բացահայտում են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության արդյունավետ կազմակերպման ուղիները:

Ատենախոսի կողմից հետազոտությունն իրականացվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան համար 2, Երևանի «Վարդանանց ասպետներ» համար 106 հիմնական և Արագածոտնի մարզի Հարթավան գյուղի միջնակարգ դպրոցներում: Հետազոտությանը մասնակցել է 473 աշակերտ, 38 ուսուցիչ և 122 ծնող: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել, բացահայտվել և ներկայացվել են կրտսեր դպրոցականների ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները և առաջադրվել են մանկավարժական աջակցության ուղիներ:

Հետազոտության ընթացքում իրականացվել է *աշակերտների փաստաթղթերի* ուսումնասիրություն, *դասալսումներ* 3-րդ և 4-րդ դասարաններում «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից, կիրառվել են Ն.Գ.

Լուսկանովայի, Ն.Պ. Կապուստինի և Վ.Գ. Շչուրի *ախտորոշիչ մեթոդիկաները*, իրականացվել են *զրույցներ* ծնողների և աշակերտների հետ, *հարցաթերթիկային հարցում՝* ուղղված ուսուցիչներին և ծնողներին, կազմվել և հանձնարարվել են *հայտորոշիչ գրավոր աշխատանքներ* «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից:

Հեղինակի կողմից առանձնացվել են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառների 4 խումբ և ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների պայմանական 3 խումբ, առաջադրվել են մանկավարժական աջակցության ուղիներ, որոնց արդյունավետությունը պարզելու նպատակով կրկին իրականացվել են դասալսումներ, հանձնարարվել են գրավոր աշխատանքներ, իրականացվել է հարցաթերթիկային հարցում, զրույցներ և կիրառվել են ախտորոշիչ մեթոդիկաներ: Այնուհետև իրականացվել են հետազոտության արդյունքների հավաքագրում, համակարգում, վերլուծություն, ինչպես նաև առաջադրված խնդիրներին համապատասխան ձևակերպվել են եզրակացություններ:

Ատենախոսը հանգամանորեն ներկայացրել է, որ մշտադիտարկման արդյունքում իրենց կողմից կիրառված տարամակարդակ առաջադրանքները, վարժությունները, հանձնարարականները նպաստում են սովորողի՝ ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելուն և հնարավորություն են տալիս յուրացնել նյութը, ձեռք բերել գիտելիքներ, ձևավորել հմտություններ, ապահովել առարկայական չափորոշիչներում ամրագրված ակնկալվող վերջնարդյունքները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 7 գիտական հոդված, որից 5-ը՝ համատեղությամբ:

Հարկ ենք համարում նշել Գոհար Երիցյանի ատենախոսական աշխատանքի արժեքավոր կողմերը.

1. հետազոտության արդիականությունը ներկայացված է ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում,

որտեղ կարևորվում է ուսումնառության ցածր արդյունքներ գրանցած կրտսեր դպրոցականների հիմնահարցը,

2. սահմանված է «ուսումնական դժվարություն» հասկացությունը, որը բխում է չափորոշչահեն կրթության պահանջներից,

3. կիրառվել են Ն.Գ. Լուսկանովայի, Ն.Պ. Կապուստինի և Վ.Գ. Շչուրի ախտորոշիչ մեթոդիկաները, որը բարձրացրել է հետազոտության արժեքը:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Ցանկալի կլիներ պաշտպանության ներկայացված դրույթներից 2-րդը ձևակերպվեր որպես պնդում:

2. Տրամագիր 42-ում (էջ 139) տրամագրի գլխագիրն ու բուն բովանդակությունը չեն համապատասխանում. «Մայրենի» առարկայի դասալսումների արդյունքների վերլուծությունը «Մաթեմատիկա» առարկայից է:

3. Շարադրանքի մեջ (էջ 13, 17, 18, 19, 22) հղումները կատարված են օտար լեզուներով:

4. Հավելվածներում ներկայացված գրավոր աշխատանքների նմուշներում (օրինակ՝ էջ 204-214, ...) կիրառվել է գնահատման միավորային համակարգ, մինչդեռ տարրական դասարաններում գործում են ձևավորող և բնութագրող գնահատումները:

5. Ցանկալի կլիներ, որ աշխատանքում սկզբում ներկայացվեր տրամագիրը, ապա վերլուծությունը (օրինակ՝ էջ 114), ինչպես նաև որոշ տրամագրեր, որոնք վերլուծված չէին, վերլուծվեին (օրինակ՝ էջ 122-125, 126-128:)

6. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի վրիպակներ:

Գոհար Բերկայի Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական նշանակալի արժեք, այն օգտակար է դպրոցում դասավանդող ուսուցիչների համար:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Գոհար Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և գիտական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
մ.գ.թ., դոցենտ՝ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ-ի գիտքարտուղար,
մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս. Բեժանյան